

7041

32112

2-22

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵՅԻ ՀՈՒՆԻՄՅԱՆ
ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

3 K 7 2

2-22

ԽՍՀՄԻՍԿՐԱՑ — 1936 — ՅԵՐԵՎԱՆ

17.09.2013

7041

ՀՈՂ
2-22

տ

23 SEP 2006

Պրոլետարներ՝ ձեր յերկրներին, սիացե՛ք

1 DEC 2009

ՀԿԻՂ

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵՅԻ ՀՈՒՆԻՍՅԱՆ
ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

(1 — 4 ՀՈՒՆԻՍԻ 1936 Բ.)



● 1936

РЕЗОЛЮЦИИ ИЮНЬСКОГО ПЛЕНУМА
ЦЕНТРАЛЬНОГО КОМИТЕТА ВКП(б)

Армпартиздат, Эривань

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1936 թվականի հունիսի 1—4-ին տեղի ունեցավ Համ.
Կ(բ)Կ կենտկոմի պլենումը:

Պլենումը ֆենուրյան առավ հետևյալ հարցերը.

1) ԽՍՀՄ Սահմանադրության նախագիծը (գեկու-
ցող ընկեր Ի. Ստալին):

2) Բերֆահավաֆի և գյուղատնտեսական մթերում-
ների մասին (գեկուցողներ՝ ընկերներ Չերնով, Կալմա-
նովիչ, Միկոյան, Կեյներ):

Համապատասխան բանաձևերը տպագրվում են ստո-
րեվ:

Բացի այդ՝ պլենումն ընթացիկ հարցերում ֆենու-
րյան առավ կուսակցական փաստաթղթերի փոխանակ-
ման հարցը և հանձնարարեց կենտկոմի կազմբյուրոյին,
ընկեր Յեժովի հաղորդագրության ու ընկեր Ստալինի
առաջարկների հիման վրա վորոշում մշակել կուսակ-
ցության անդամ ընդունելու և կուսակցական փաստա-
թղթերի ստուգման ժամանակ կուսակցությունից հե-
ռացվածների բողոքները ֆենարկելու կարգի մասին:

ԽՍՀՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

**ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐԱԿԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԶԵՎՆ
ԸՆԿԵՐ ՍՏԱՒԻՆԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ**

ԸՆԴՈՒՆՎԱԾ 1936 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ

Ա) ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ ԽՍՀ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՑԱՑՐԱԾ՝ ԽՍՀՄ ՍԱՀՄԱՆ-
ԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԻՆ:

Բ) ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ ՀԱՐՑԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԵՎՈ-
ՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ ԳՏՆԵԼ ԽՈՐ-
ՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ
ՀՐԱՎԻՐԵԼ՝ ԽՍՀՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻ-
ԾԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՔԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԶԵՎՆ ԸՆ-
ԿԵՐՆԵՐ ԶԵՐՆՈՎԻ, ԿԱԼՄԱՆՈՎԻԶԻ, ՄԻԿՈՑԱՆԻ
ՅԵՎ ԿԼԵՑՆԵՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ

ԸՆԳՈՒՆՎԱԾ 1936 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ

Կոլտնտեսային կարգի հաղթանակը դյուրաւ աղա-
մանաւորեց կոլտնտեսութիւնների սոցիալիստական
մրցութեան հուժկու վերելքը, չնայած դարձան զգա-
լիորեն ուշ բացվելուն, ապահովեց բոլոր կոլտուրա-
ների ցանքի ավարտումն ավելի կարճ ժամկետում,
քան անցյալ տարի, հողի ավելի լավ մշակումով:

Յանքն ամենակարճ ժամկետներում ավարտելու և
ժամանակակից ագրոտեխնիկայի բազմապիսի ձևերը
լայնորեն կիրառելու գործում վճռական դեր խաղաց
այն հարաճուն ոգնութիւնը, վոր կուսակցութիւնն ու
խորհրդային իշխանութիւնն անչեղորեն ցույց են տա-
լիս կոլտնտեսութիւններին՝ մեքենա-տրակտորային
կայանների միջոցով, տրակտորներով ու դյուրատըն-
տեսական մեքենաներով, ինչպես և կոլտնտեսու-
թիւնների ագրոնոմիական սպասարկման բարելավու-
մը: Հենց միայն 1936 թվականին մեքենա-տրակտորա-
յին կայանների տրակտորային սլարկի կարողութիւնն
աճում է մեկ միլիոն 650 հազար ձիու ուժով: Մեքենա-
տրակտորային կայանները 1936 թվականին ստանում
են 19·200 առաջնակարգ «Ստալինեց» հզոր թրթուրա-

վոր տրակտոր ու 40 հազար անվավոր տրակտոր, 52 հազար կոմբայն ու 16 հազար հատուկ, «Ունիվերսալ» տրակտոր տեխնիկական կուլտուրաների կուլտիվացիայի և բերքահավաքի համար: Մեքենա-տրակտորային կայաններն ու խորհանտեսությունները դաստիարակել ու ամրացրել են առաջավոր տրակտորիստներին ու կոմբայնավարներին կադրեր, մեծացել է տրակտորային աշխատանքների ծավալը և բարձրացել վորակը:

Ինքնուրույն բերքատվությունն ապահովելու լուրջ և վճռական պայմանը ներկայումս այն է, վոր կոտրելով դյուրանուններով արտադրութայն բոլոր բնագավառներում մեքենայացումը հաստատուն կերպով արմատացնելու գործի նկատմամբ առանձին աշխատողներին կողմից ցուցաբերվող դիմադրությունը՝ սոցիալատական հողագործութայն առաջավոր, մշակման ու բերքահավաքի մեքենայական տեխնիկային տիրապետած մարդկանց փորձն ու նվաճումները դարձվեն կոլտնտեսությունների, խորհանտեսությունների ու մեքենա-տրակտորային կայանների աշխատողների ամբողջ մասսայի սեփականություն:

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի պլենումը վորոշում է.

I

ՅԱՆՔԵՐԸ ԽՆԱՄԵԼՈՒ ՅԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՄԱՍԻՆ

Ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՆՏՐԱԿՏԵՐ ՅԵՎ ԱՐԵՎՍՏԱՂԻԿ

1. Հարավային ու արևելյան մարզերի, յերկրամասերի ու շրջանների կուսակցական և խորհրդային կադմակերպությունների հատուկ ուղղորդությունը հրավիր-

րել այն բանի վրա, վոր այդ շրջաններում ընթացիկ տարում արդեն կոմբայնը դառնում է բերքահավաքի լուրջ և անհրաժեշտ մեքենան: ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի պլենումը պահանջում է այդ մարզերի, յերկրամասերի ու շրջանների ղեկավարներից, ԽՍՀՄ-ի Հողօգտագործման ու կոլտնտեսությունների կոմբայնային կայանների ու խորհանտեսությունների ղերեկավարներին՝ կոմբայնները խնամքով նախապատրաստել բերքահավաքին, ստուգել կոմբայնավարներին պատրաստությունը, առանձնացնել բավականաչափ տրանսպորտ՝ առանձնապես կոլտնտեսային կոմբայններին սպասարկելու համար և ամեն կերպ ողնություն ցույց տալ կոմբայնավարներին միջև սոցիալատական մրցությունը ծավալելուն, այն հաշվով, վոր ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից սահմանված կոմբայններով կատարվող բերքահավաքի պլանն այս տարի յուրաքանչյուր մեքենա-տրակտորային կայան ու խորհանտեսություն, յուրաքանչյուր յերկրամաս, մարզ ու հանրապետություն վոր միայն կատարի, այլև ղերակատարի:

2. Առաջարկել ԽՍՀՄ Հողօգտագործման ու կոլտնտեսությունների կոմբայնային կայանների ու խորհանտեսությունների ղերեկավարներին.

ա) վոր ուղ, ջան բերքահավաքն սկսելուց 15 օր առաջ հողամաս առանձնացնել յուրաքանչյուր կոմբայնի համար վոր պակաս այն չափից, վորը կոմբայնով կատարվող բերքահավաքի պլանով սահմանված է յուրաքանչյուր խորհանտեսություն ու մեքենա-տրակտորային կայանի համար: Կոմբայնավարին՝ վորպես կոմբայնային ագրեգատի պետի՝ անմիջականորեն յեն-

Թարկել մեքենա-տրակտորային կայանի ղեկը կտորին.

բ) ստուգել, թե կոմբայնները վորքան են նախապատրաստված աշխատանքի համար, բոլոր կոմբայնները դաշտ դուրս բերել վոչ ուշ, քան բերքահավաքն սկսելուց հինգ որ առաջ և կոմբայնավարի տրամադրությամբ տակ ղենել անհրաժեշտ պահեստի մասերի կոմպլեկտ, ինչպես որինակ՝ շղթաների ողակներ, սեզմենտներ, պլանկաներ և այլն.

գ) ՁՏՁ տրակտորների աշխատանքը բերքահավաքի ժամանակ ապահովել յերկուտական կոմբայնով.

դ) ժամանակին կազմակերպել դաշտային կայաններ, այն հաշվով, վոր կոմբայնները դաշտ դուրս բերելու մոմենտից կոմբայնավարները, նրանց ունականներն ու տրակտորիստները գտնվեն կայաններում.

ե) վոչ ուշ, քան բերքահավաքն սկսելուց 10 որ առաջ յուրաքանչյուր մեքենա-տրակտորային կայանում կազմակերպել ավտոմոբիլային շարժական վերանորոգման արհեստանոցներ, այն հաշվով, վոր յուրաքանչյուր 15 կոմբայնի համար լինել մեկ ավտոմոբիլային շարժական արհեստանոց:

3. 1936 թվականի համար պահպանել կոմբայնավարների վարձատրման այն կարգը, վոր սահմանված է ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1935 թվականի ապրիլի 19-ի վորոշմամբ:

4. կոմբայններին տրանսպորտով անխափան սպասարկելու, հացահատիկը դտելու, չորացնելու և վորխաղերի ու նպատակով դաշտավարական բրիգադներում բերքահավաքի ամբողջ ժամանակամեջոցում ուսանձնացնել ողակներ՝ հացահատիկը կոմբայնի բունկերներին հանելու, հացահատիկը դտելու և չորացնելու հա-

մար, այդ ողակներն ապահովելով հացահատիկը դտող մեքենաներով և բավարար քանակությամբ կոլտնտեսային կենդանի քաշող ուժով և մեքենա-տրակտորային կայանների և կոլտնտեսությունների ավտոտրանսպորտով:

5. Առաջարկել ԽՍՀՄ-ի Ծանր Արդյունաբերության Ժողկոմատին՝ արագացնել կոմբայնների և այլ բերքահավաքի մեքենաների ու ավտոմոբիլների պահեստի մասերի փոխադրումը, այն հաշվով, վոր փոխադրման առաջին իրսամյակի պլանը կատարվի մինչև հունիսի 25-ը, յերրորդ յեռամսյակի պլանը՝ մինչև այս տարվա ողոստոսի 1-ը:

6. Աշնանացան ու վաղ դարձանացան հասկավոր կուլտուրաները (հաճար, ցորեն, վարսակ, դարի) հնձողմեքենաներով (лобогрейка և жатка) հնձելու առաջիկա ուլին ժամկետ սահմանել 12—15 աշխատանքային որ:

Հացահատիկի կորուստ չառաջացնելու և բերքը լրիվ պահպանելու նպատակով՝

ա) ամբողջ հնձած հացահատիկը խուրձ կապել և դեղ ղնել.

բ) ամբողջ հացահատիկը դեղ անել այն հաշվով, վոր վոչ ուշ, քան հունիսի վերջացնելուց 10-15 որ հետո ավարտված լինել այդ աշխատանքը.

գ) վոչ սեվահողային դոտում և արենային չրջաններում ծածկերի ու կոլտնտեսային չորանոցների կառուցումն ավարտել վոչ ուշ քան մինչև ողոստոսի 1-ը.

դ) բոլոր բերքահավաք մեքենաներն ապահովել հասկահավաք գործիքներով և հնձված դաշտում հասկերը

համատարած կերպով հավաքել ձիաքարչ և ձեռքի փոցխերով .

ե) կատարել դյուղատնտեսական բերքահավաք ինվենտարի համատարած ախտահանում և թուլլ չտալ, վոր հացահատիկը կալսվի հին կալերում՝ առանց վերջիններս նախապես ախտահանելու .

է) հացահատիկի կալտումն սկսել վոչ ուշ քան հունձն սկսելուց 3—5 որ հետո, ապահովելով յեղած բոլոր բարդ կալսիչների ամենորյա առնվազն 20-ծամյա աշխատանքը .

և) առաջարկել իրոհանտօրկոմատին յուրաքանչյուր կոմբայնի վրա, առանձնապես հացահատիկային խորհարնտեսուլթյուններում, կազմակերպել հացահատիկի 3-րդ դասում և արգելել կուտակման կետերի կազմակերպումը հացահատիկային խորհանտեսուլթյուններում :

7. Համ Կ(բ) Կ Կենտկոմի պլենումը կուսակցական ու խորհրդային կազմակերպուլթյունների հատուկ ուշադրուլթյունն է հրավիրում այն բանի վրա, վոր ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ) Կ Կենտկոմի 1936 թվականի փետրվարի 10-ի վորոշման համապատասխան՝ կորտնտեսուլթյուններում սերմացվի հողամասեր առանձնացնելու կապակցուլթյամբ յուրաքանչյուր կորտնտեսուլթյունն պետք է իրեն լրովին ապահովի լավագույն վորակի սերմացվով, վորի համար՝

ա) սերմացվի համար առանձնացված ցանքերը վոչ միայն մաքրել մորախոտերից, այլ և կատարել ուշադիր տեսակավոր քաղհան՝ ցանքերի միջից այլ կուլտուրաների խառնուրդները հեռացնելու միջոցով .

բ) սերմացվի համար առանձնացված ցանքերի բեր-

քահավաքը կատարել լրովին հասունացման շրջանում և ավարտել վոչ ուշ քան 3—4 աշխատանքային որում .

դ) սերմացվի համար առանձնացված հողամասերի հացահատիկը կալսել առանձին կալերում .

դ) սերմացուն պահելու համար առանձնացնել սերմացվի մեկուսացված պահեստներ, արգելելով այդ պահեստներն ոգտադործել պարենային ու կերի հացահատիկ պահելու համար .

և) սերմացվի ֆոնդերն պահեստը լցնել միայն սերմացուն խնամքով դտելուց հետո :

8. Սահմանել, վոր սերմացվի համար առանձնացված ցանքերից ստացվող ամբողջ բերքը պետք է լրովին ոգտադործվի կորտնտեսուլթյուններն ու խորհանտեսուլթյունները 1937 թվականի ցանքի համար անհրաժեշտ լավորակ սերմացվով ապահովելու նպատակով :

Քրեական պատասխանատուլթյան սպառնալիքով արգելել սերմացվի ցանքերից ստացվող հացահատիկը բացի սերմացվից վորեւե այլ կարիքի համար ոգտադործելը :

9. ՀամԿ(բ) Կ Կենտկոմի պլենումը նախազգուշացնում է ԽՍՀՄ Հողօրկոմատին, կուսակցական ու խորհրդային կազմակերպուլթյուններին, վոր անթույլատրելի յե յեզիպտացորենի, կորեկի ու արեածաղկի խնամքի ու բերքահավաքի աշխատանքների անտեսման անցյալ տարիներում դոյուլթյուն ունեցող պրակտիկայի կրկնուլթյունը և պարտավորեցնում է ընթացիկ տարում՝

ա) կատարել յեզիպտացորենի առնվազն յերկու լրիվ մշակուլթյուն .

բ) հատկապես առանձնացնել յեզիպտացորենի այն

ցանքերը, վորոնց բերքը հավաքվելու յե պիկկերները միջոցով.

դ) ձեռքով քաղհանել կորեկը 2—3 անգամ, մինչև մոլախոտերը կատարյալ վոչնչացումը.

դ) կատարել արևածաղկի առնվազն 3 լրիվ մշակություն, այն հաշվով, վոր 3-րդ մշակությունն ավարտված լինի վոչ ուշ հուլիսի 1-ից.

ե) ապահովել կոմբայները լրիվ ոգտադործումն արևածաղկի բերքահավաքի ժամանակ, այն հաշվով, վոր մեքենա-տրակտորային կայանները կողմից սպասարկվող կորտնտեսություններում արևածաղկի բերքի առնվազն 90 տոկոսը հավաքվի կոմբայներով.

զ) սահմանել, վոր արևածաղկի բերքահավաքը պետք է ավարտվի վոչ ալեքի քան 20 ուրվա ընթացքում:

10. Համկ(բ)ի Կենտկոմի պլենումն առաջարկում է բոլոր մեքենա-տրակտորային կայանների դիրեկտորներին, կոլտնտեսությունների վարչություններին և խորհանտեսություններին դիրեկտորներին՝ կազմակերպել բերքը հավաքված դաշտերի վորակի մանրադրնին ընդունում, բերքի ամենախիստ հաշվառում և համարակրամից պահպանություն, վորի համար՝

ա) սահմանել, վոր գաշտավարական բրիգադի բրիգադիլըն աժեն որ ալտով պետք է ընդունի բերքը հավաքված դաշտերը՝ դնահատելով կատարված բերքահավաքի վորակը: Բերքն այն ժամանակ միայն հավաքված համարել, յերբ դաշտը բրիգադիլից կընդունի կոլտնտեսության նախագահը, իսկ խորհանտեսություններում՝ բաժանմունքի կամ ֆերմայի կառավարիչը.

բ) սահմանել հացահատիկի պարտադիր կշռում կալ-

սիչի մոտ, կորտնտեսային միջանկյալ կուտակման կետերում՝ ըստ բունկերները թվի և հացահատիկն ամբարում ընդունելու ժամանակ.

դ) հացահատիկի պահպանման պատասխանատվությունը դնել կալերում՝ յուրաքանչյուր բրիգադիլի գծով—բրիգադիլի վրա, իսկ ամբողջ կոլտնտեսության մեջ՝ կոլտնտեսության նախագահի վրա:

Բ) Բ Ա Մ Բ Ա Կ

Առաջարկել ԽՍՀՄ-ի Հողօրդկոմատին, բամբակացան շրջանների կուտակցական ու խորհրդային կազմակերպություններին՝

ա) կատարել բամբակենու առնվազն 5 լրիվ մշակություն (կուլտիվացիա, փխրացում, քաղհան) և դրանք ավարտել ԽՍՀՄ-ի Հողօրդկոմատի սահմանած ժամկետներին՝ յուրաքանչյուր մեքենա-տրակտորային կայանի ու խորհանտեսության գծով ապահովել տրակտորային կուլտիվացիայի պլանի անպայման կատարումը.

բ) ոգտադործելով բերքատվության առաջավորները փորձը, լայնորեն կիրառել ախոսային վոռոդումը, առանձնապես մինչև բամբակի ծաղկելը և ուժեղացնել վոռոդումը ծաղկման ու պողպատյացման շրջանում.

գ) կոլտնտեսային ու խորհանտեսային տրանսպորտը նախապատրաստել բամբակի բերքահավաքին և խոնափ բամբակը չորացնելու համար կառուցել կոլտնտեսային չորանոցներ մինչև սեպտեմբերի 15-ը.

դ) կոլտնտեսություններում ու խորհանտեսություններում ապահովել անհրաժեշտ քանակությամբ սկե-

դինդները նախապատրաստումը բամբակի (կնդուզներին) վերջին չանաքն առավելագույն չափով մեքենայացնելու համար, այն հաշվով, վոր մինչև ղեկտեմբերի 1-ը լրիվ ավարտվի բամբակի բերքահավաքը և անհասարկ ծախսովի աշնանավարը՝ 1937 թվականի ցանքի համար:

Գ) Ճ Ա Կ Ն Գ Ե Ղ

1. Սոաջարկել ԽՍՀՄ-ի Հողօրդկոմատին, խորհրդային ու կուսակցական կազմակերպություններին՝

ա) լայնորեն կիրառել շաքարի ճակնդեղն ինչպես տեղական այնպես էլ հանքային պարարտանյութերով պարարտացնելու՝ 500-ականների կողմից ստուգված փորձը և փութաջանորեն շարունակել տեղական պարարտանյութերի հավաքումը:

բ) մինչև հացահատիկային կուլտուրաների բերքահավաքն սկսելն ապահովել առնվազն յերեք լրացուցիչ տրակտորային շարամեջ փխրացում այն հաշվով, վոր 4-րդ փխրացումը կատարվի հացահատիկային կուլտուրաների բերքահավաքի շրջանում, իսկ 5-րդը՝ ճակնդեղի շարքերը բաց անելուց հետո:

գ) տրակտորիստներին ու ղեկավարներին ճակնդեղի մշակութայն ամբողջ ժամանակամիջոցում ամրացնել տրակտորների քաղհանող ազդեղատներին, առանց այլ աշխատանքի փոխադրելու նրանց:

2. Յերկարակնճիթ ճիճվի մասսայաբար յերևան դալու և մարդաղետնային թրթուրի ու աշնանային լվիճի կողմից ճակնդեղին սպառնացող ուժեղ վտանգի կապակցությամբ՝ առաջարկել ԽՍՀՄ-ի Հողօրդկոմատին,

1010
54104

Բ
Ե
Օ
Ե

ԽՍՀՄ-ի Մենդարդյունարերության օրդկոմատին և ճակնդեղի մշակութայն շրջանների բոլոր կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին՝ անդուլ պայքար մղել ճակնդեղի դյուղատնտեսական վնասատուների դեմ, ցանքի յուրաքանչյուր հեկտարը պաշտպանելու համար: Կենտկոմի պլենումն առանձնապես մատնանշում է, վոր անհրաժեշտ է անդուլ պայքար մղել դյուղատնտեսության վնասատուների դեմ՝ նրանց վտանգն ընթացիկ տարվա բերքի համար վերանալուց հետո էլ:

3. 1936 թվականին մեքենա-տրակտորային կայանների ու խորհանտեսությունների համար վորպես պարտադիր առաջադրանք սահմանել, վոր ճակնդեղի ցանքերի առնվազն 90 տոկոսը պետք է հանվի ճակնդեղ հանող մեքենաներով: ճակնդեղազործական ողակները դատալները այնպես, վոր ճակնդեղի բերքահավաքը, տերևների կտրատումը, մաքրումն ու փոխադրումը կատարվի ժամանակին ու առանց ձգձգումների:

4. Շաքարի ճակնդեղի մասսայական բերքահավաքն սկսելու ժամկետ սահմանել—

- Արևմտյան Միբրիի համար—5/IX
- Ալով-Սևծովյան, Սարատովի յերկրամասերի, Ղադախստանի, Կիրգիզիայի ու Բաշկիրիայի ԱՍՍՀ հանրապետությունների և Արևմտյան մարզի համար— 10/IX
- Կուրսկի ու Մոսկովայի մարզի համար— 10—15/IX
- Վորոնեժի մարզի համար— 15—20/IX
- Ուկրաինայի և Հեռավոր Արևելյան յերկրի համար— 15—20/IX
- Վրաստանի և Հարյապոնի համար— 25/IX



և շաքարի ճակնդեղը հանելու ու փոխադրելու գործն ավարտել հետևյալ ժամկետներին .

Հանելն ավարտելու ժամկետը	Փոխադրումն ավարտելու ժամկետը
Ուկրաինայի ԽՍՀ, Ադով-Սեծովյան, Հյուսիսային Կովկասի յերկիրներ, Վրացաստանի ԽՍՀ, Հայաստանի ԽՍՀ, Կիբզիդիայի Ա.ԽՍՀ և Դազաբաստանի Ա.ԽՍՀ	Նոյեմ. 1-ը Նոյեմբ. 10-ը
Կուբսկի, Վորոնեժի, Մոսկովայի, Արևմտյան, Յարոսլավլի մարզեր և Հեռավոր արեվելյան յերկիր	Հոկտ. 20-ը Նոյեմբ. 1-ը
Արևմտյան Սիբիրի, Սաբաուսի, Կուլբիշևի յերկիրներ և Բաշկիրիայի Ա.ԽՍՀ	Հոկտ. 1-ը Հոկտեմ. 15-ը

Առաջարկել ԽՍՀՄ-ի Հողօրոգիումատին և ԽՍՀՄ-ի Մենդարդյունարերության Ժողկոմատին՝ կազմել ճակնդեղը հանելու և փոխադրելու դրաֆիկ, այն գործարանների շրջաններում, վորոնք սկսելու յեն գործել մինչև սեպտեմբերի 20-ը, այն հաշվով, վոր այդ գործարաններն ապահովվեն ճակնդեղի հինգ որվա պաշարով :

Շաքարի ճակնդեղը հանելու և փոխադրելու գործը կազմակերպել այնպես, վոր հանված ճակնդեղը փոխադրվի սեպտեմբեր ամսվա ընթացքում՝ նույն օրը, իսկ հոկտեմբերին դաշտում մնացած լինի հանված ճակնդեղի վորչ ավելի, քան 5—10 որվա պաշար :

5. Կենտկոմի պլենումը հատուկ ուշադրություն է

հրավիրում ճակնդեղի մաքրման ու տեսակավորման վերաբերյալ կոնտրակտացիոն պայմանագրով սահմանված բոլոր պայմանները կոտնտեսությունների կողմից պարտադիր կարգով պահպանելու անհրաժեշտության վրա և առաջարկում է կոտնտեսությունների նախագահներին՝ ապահովել ամենահասարակ տերեւահատների պատրաստումը, բոլոր ողակներին չափեր մատակարարելը, սայլակները վերանորոգումն ու հարմարեցումը ճակնդեղի փոխադրման համար, ինչպես նաև ավտոմոբիլների թափքերի վերանորոգումը :

6. Առաջարկել ԽՍՀՄ-ի Հողօրոգիումատին, յերկրային ու մարզային գործկոմներին՝ յուրաքանչյուր մեքենատրակտորային կայանի և յուրաքանչյուր կոտնտեսության համար կոնկրետ առաջադրանքներ սահմանել ճակնդեղի փոխադրման ճանապարհները կառուցման ու վերանորոգման ուղղությամբ, այն հաշվով, վոր մինչև ճակնդեղի բերքահավաքն սկսվելը, ճակնդեղի փոխադրման ուղղության վրա գտնվող բոլոր ճանապարհներն ու կամուրջները լիովին կանոնավոր վիճակի մեջ դրվեն և ապահովված լինի դրանց մշտական խնամքը ճակնդեղի փոխադրման ամբողջ ժամանակամիջոցում : Առաջարկել շաքարի գործարանների ղերեկտորներին՝ այդ նույն ժամկետներին վերանորոգել և լիովին կանոնավոր վիճակի մեջ դնել գործարանների բոլոր մերձատար ուղիները :

Դ) Ա Ո Ւ Ծ Յ Ե Վ Կ Ա Ն Ե Փ

1. Համկ(բ)Կ Կենտկոմի պլենումն առաջարկում է ԽՍՀՄ-ի Հողօրոգիումատին, վուշագործական մարզերի ու շրջանների կուսակցական և խորհրդային կազմա-

կերպություններին խնամքով նախապատրաստել ու կազմակերպել վուչի քաղը՝ տրակտորային քաղող մեքենաներով:

ա) մինչև այս տարվա հուլիսի մեկը ապահովել բոլոր վուչ քաղող մեքենաների լրիվ վերանորոգումը:

Կոլտնտեսությունների նախագահները պետք է դաշտերն ընդունեն վուչը ծաղկելուց տասն ու ատար, դաշտերն ստուգելով վոչ թե ըստ կատարված քաղահանների, այլ ըստ դաշտերի մաքրության:

բ) հունիս ամսվա ընթացքում ստուգել, թե վուչ քաղող մեքենայի յուրաքանչյուր մեքենավար վորքան է նախապատրաստված մեքենայական բերքահավաքին և յուրաքանչյուր մեքենավարի ամրացնել վուչ քաղող լայնարեքան մեքենա ու տրակտոր:

գ) վոչ ուչ, քան 10 որվա ընթացքում կոլտնտեսություններում սահմանել նաստուրայով, թե վոր դաշտերի բերքն է մեքենայով հավաքվելու և յուրաքանչյուր վուչ քաղող մեքենավարին տալ վուչ քաղող մեքենայի ոգտադործման մարչրուտը:

2. Առաջարկել ԽՍՀՄ-ի Հողօդկոմատին և բոլոր կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին ապահովելու՝

ա) վուչի մոլայտոտ ցանքերը 2—3 անգամ քաղահան անելը, իսկ նոսրացված սերմնաբուծական ցանքերում՝ նաև շարամեջ մշակությունը և կանեփի ցանքերի 1—2 քաղահանը վոչ ուչ, քան մինչև շարքերում կանեփի միահյուսումը:

բ) վուչի ցանքերի պարարտացումը տեղական ու հանքային պարարտանյութերով բոլոր վուչադործական կոլտնտեսություններում:

գ) վուչի քաղը թելի համար կոլտնտեսություններում կատարել վաղ դեղին հասունության շրջանում և վոչ ավելի, քան 8 որվա ընթացքում, չթուլյատրելով վուչի բերքահավաքի ձգձգումը: Սերմնաբուծական ցանքերի վուչի քաղը կատարել դեղին հասունության շրջանում, չթուլյատրելով, վոր վուչը քաղվի վաղաժամ, և քաղն ավարտել վոչ ավելի, քան 6 որվա ընթացքում:

դ) պոսկոնի լրիվ քաղը կատարել 7—8 որվա ընթացքում՝ նրա մասսայական ծաղկման շրջանում, իսկ կանեփի քաղը՝ 10 որվա ընթացքում՝ դլիկեների միջին մասի սերմերի մոմային հասունացման շրջանում:

ե) վուչի գլուխները կարծումը լիովին ավարտել 6—8 որվա ընթացքում՝ քաղելու որվանից հաշված և մինչև բերքահավաքի սկիզբը յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ, իսկ խոշոր կոլտնտեսություններում՝ յուրաքանչյուր բրիգադում ավարտել փակ կալերի ու ծածկերի կառուցումը, վուչը կալսելու համար:

Առաջարկել վուչագործական շրջաններին՝ կոլտնտեսություններում ծավալել վուչկալսիչների մասսայական արտագրությունն այն հաշվով, վոր արդեն 1937 թվականին լիովին վերջ տրվի վուչի գլուխները գրորտահանումը և տակառներով կալսելուն:

զ) վուչի ամբողջ ծղոտի փուլը (թրջումը) յուրաքանչյուր վուչագործական մարդում, յերկրամասում ու հանրապետության մեջ ավարտել ոգտստոսին, կազմակերպելով վուչի ուչադիր տեսակավորումն ըստ վորակի՝ վուչի բերքահավաքի, փուլու, հավաքելու և վերամշակման ժամանակ:

է) կանեփի թրջումն սկսել բերքահավաքից անմիջա-

պես հետո, այն հաշվով, վոր մինչև սառնամանիքներն սկսվելը կանեփի ծղոտը թրջոցից հանված լինի և սկսված լինի նրա մշակումը:

3. Առաջարկել ՌՍՖՍՀ-ի, Ուկրաինայի ԽՍՀ-ի, Բելոռուսիայի ԽՍՀ-ի տեղական արդյունաբերութեան ժողկոմատներին, վուչագործական շրջաններ ունեցող մարզերի ու յերկրամասերի գործկոմներին և հանրապետութեաների ժողկոմխորհներին՝ ապահովել Անտոնովի և Սերգեյեվի կոնստրուկցիայի վուչ գող մեքենաների արտադրութեան ու կոլտնտեսութեաներին մատակարարելու ասպարեզում նրանց համար սահմանված պլանի անպայման կատարումը:

4. Առաջարկել ԽՍՀՄ-ի Հող-ժողկոմատին, կուսակցական ու խորհրդային կազմակերպութեաներին՝ վուչ ուչ, քան բերքահավաքն սկսելուց 10 որ առաջ քորաքանչյուր կոլտնտեսութեան մեջ, բացի սերմնաբուծական կոլտնտեսութեաներից, առանձնացնել վուչի ու կանեփի լավագոյն ցանքեր, վորոնց սերմն առաջին հերթին, վուչը քաղելուց 10—15 որվա ընթացքում, պետք է հանձնվի կոլտնտեսութեաների սերմացվի ֆոնդին, այն չափով, վոր ապահովի յեկող տարվա ցանքի պլանի կատարումը, ըստ վորում պետք է անպայմանորեն կատարվի կոնտրակտացման կարգով վուչի և կանեփի սերմ հանձնելու պլանը:

Ե) ՅԵՆԵՔՆՈՒԿ ՅԵՎ ԱՌՎՈՒՅՑ

Համ(բ)Կ Կենտրոն առաջարկում է ԽՍՀՄ-ի Հող-ժողկոմատին, կուսակցական և խորհրդային կազմակերպութեաներին—

ա) վուչ ուչ, քան մինչև հուլիսի մեկը կատարել առավույտի և յերեքնուկի սերմացվի համար առանձնացված ցանքերի տարածութեան ու վորակի համատարած ստուգում և ապահովել վաստ սերմնանոցների փոխաբինումը խոտավետութեան տեսակետից լավագոյն ցանքերով:

բ) առվույտի և յերեքնուկի սերմնանոցներում բերքահավաքը կատարել 7—10 որվա ընթացքում, թույլ չտալով, վոր ուչանա յերեքնուկի հնձի ժամկետն ու հնձի ժամանակ սերմացվի կորուստ տեղի ունենա, և կազմակերպել հնձված յերեքնուկի և առվույտի խուրձ կապելը, կալ փոխադրելով այն՝ չորացնելու և կալտելու համար:

գ) սերմացվի համար նախատեսված յերեքնուկի խուրձերը չորացնել կալերում և ծածկերի տակ, չորացնելու համար հարմարեցնելով անհրաժեշտ քանակութեամբ կախարաններ:

դ) յերեքնուկը հնձելուց և չորացնելուց անմիջապես հետո, միաժամանակ կազմակերպելով յերեքնուկի տրորումը և սերմացվի զտման աշխատանքները, այն հաշվով, վոր դրանք ավարտվեն հնձից վուչ ուչ, քան 20 որ հետո:

ե) կազմակերպել յուրաքանչյուր կոլտնտեսութեան և անհատական տնտեսութեան կողմից վուչ ուչ, քան մինչև այս տարվա դեկտեմբերի 1-ը, յերեքնուկի լավորակ սերմացվի հանձնումը սերմֆոնդին՝ առաջին հերթին ապահովելով, կոնտրակտացիայի կարգով յերեքնուկի սերմ հանձնելու պլանի կատարումը:

Առաջարկել ԽՍՀՄ-ի Հողօրդկոմատին, կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին—

ա) կատարել կարտոֆիլի ցանքերի առնվազն 2 խրնամքով քաղհան և 2—3 շարամեջ մշակություն, մինչև մոլախոտերի լիակատար վոչնչացումը.

բ) կատարել կարտոֆիլի բոլոր տեսակավոր ցանքերի ապրոբացիա և սերմացվի ցանքերի տեսակային մաքրում.

գ) վոչ ուշ, քան մինչև ոգոստոսի 20-ը հաստատել տեսակավոր կարտոֆիլի ոգոտադործման պլանները, վորոնք պետք է նախատեսեն տեսակավոր կարտոֆիլի փոխանակումն աչնանը՝ բերքահավաքի ժամանակ.

ե) կարտոֆիլը հանելուց հետո կատարել պարտադիր տափանում՝ մաքրելով արմատները, ինչպես նաև կրկնավար, յերկրորդ անգամ կարտոֆիլի ցողուններն ու արմատները մաքրելով բերքը հավաքած ամբողջ տարածությունից:

Է) ԽՈՅՈՒՆՁ ՅԵՎ ԿԵՐԻ ՍԻՆԱՍՅՈՒՄ

Համկ(բ)Կ Կենտկոմի պլենումը ԽՍՀՄ-ի Հողօրդկոմատի, Խորհանաժողկոմատի, կուսակցական ու խորհրդային կազմակերպությունների հատուկ ուշադրությունն է հրավիրում վոչ միայն աճող անասնաբուծությունը կոչա ու հյութալի կերով լիովին ապահովելու, այլև կերի ապահովության պաշարներ ստեղծելու անհրաժեշտության վրա:

Այդ նպատակով, ընթացիկ տարում խոտհունձն ու խոտի դեղ գներն ալարտել մինչև հացահատիկային

կուլտուրաների մասսայական բերքահավաքն սկսելը և վոչ ուշ, քան խոտհունձն սկսելուց մեկ ամսվա ընթացքում: Բոլոր շրջաններում, վորտեղ այդ հնարավոր է կլիմայական պայմանների տեսակետից, կատարել յերկրորդ խոտհունձ: Անասնաբուծությունը կոչա կերով լիովին ապահովելու համար, բերքը կոմբայնով հավաքելուց հետո, կազմակերպել դաշտում մնացած ծղոտի հավաքումը:

Խոտհունձի հետ միաժամանակ, նախքան հացահատիկային կուլտուրաների բերքահավաքն սկսելը, կատարել մոլախոտերի, վայրի խոտերի, մատղաշ յեղեղի ու վաղ սիլոսային խոտաբույսերի սիլոսացում՝ ճակնդեղադաշտի կան շրջաններում տարեկան պլանի առնվազն 35 տոկոսի, իսկ մյուս շրջաններում՝ առնվազն 50 տոկոսի չափով:

II

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՍԱԿԱՆ ՄԹԵՐԻՔՆԵՐԻ ՄԹԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ա) ՀԱՅԱՍՏԱՆԿ, ԱՐԵՎԱՍՏԱՂԻԿ ՅԵՎ ԲՐԻՆՁ

Առաջարկել կուսակցական և խորհրդային կազմակերպություններին, մեքենա-տրակտորային կայաններն ու խորհանտեսությունների գերեկատրոներին, կուտրեստեսությունների նախադահներին և Մթերման կոմիտեյին.

1) կազմակերպել հացահատիկի, արևածաղկի և բրնձի հանձնումը պետությունը.

ա) մթերումների դժուր— ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և Համկ(բ)Կ Կենտկոմի 1936 թվականի փետրվարի 27-ի վորոշումը սահմանված ժամկետներին.

բ) խորհրդատեսուցթյունների կողմից հացահատիկ հանձնելու դժուր— վոչ ուչ, քան մինչև սեպտեմբերի 15—ը՝ Ուղբեկստանի, Թյուրքմենստանի, Տաջիկստանի, Սղբբեջանի, Հայաստանի ու Վրաստանի ԽՍՀանրապետութիւններում, Ղրիմի ԱՆՍՀ—ում, Ուղեսսայի ու Գնեպրոպետրովսկի մարզերում, Հյուսիսային Կովկասի յերկրում և Ղաղախստանի ԱՆՍՀ Հարաւային մարզում, մնացած բոլոր յերկիրներում, մարզերում ու հանրապետութիւններում, իսկ յերկրագործների դժուր՝ բոլոր մարզերում, յերկիրներում և հանրապետութիւններում— վոչ ուչ, քան մինչև նոյեմբերի 1—ը:

դ) վարկը վերադարձնելու և մեքենա—տրակտորային կաշանների կատարած աշխատանքի դիմաց նրանց հասանելիք բնավարձի դժուր— մթերումների համար սահմանված ժամկետներին.

զ) աղոտնավարձի դժուր— տարեկան պլանի 60 տոկոսը մինչև 1936 թվականի դեկտեմբերի 31—ը, իսկ մնացած 40 տոկոսը՝ 1937 թվականի առաջին կիսամյակում:

2) Այլահոյեւ կոլտնտեսութիւնների ու խորհրդատեսութիւնների կողմից մթերակայաններին միանդամայն լալորակ հացահատիկ, արևածաղիկ ու բրինձ հանձնելը, վորի համար կազմակերպել հացահատիկի՝ առանձնապես կոմբայնով կալսված հացահատիկի՝ իւրեամքով դտումը:

3) Նախադուռչացնել խորհրդատեսութիւնների դիւրեկտորներին ու քաղբաթիւնները պետերին, վոր նրանք հատուկ պատասխանատուութիւն են կրում պետութիւնը հացահատիկ, արևածաղիկ ու բրինձ

հանձնելու վերաբերյալ իրենց համար սահմանված պլանների կատարման համար, ինչպես նաև հացահատիկի, արևածաղիկի ու բրնձի այն ամբողջ ավելցուկն անպայման պետութիւնը հանձնելու համար, վորը կարող է խորհրդատեսութիւններում մնալ պետութիւնը հանձնելու և սերմացվի, կերի ու պարենային ֆոնդերն առանձնացնելու պլանի լրիվ կատարումից հետո:

4) Անասուններին կերակրելու համար կոլտնտեսականներին ավանսներ բաց թողնելու և կոլտնտեսութիւնների մյուս ներտնտեսական կարիքները հողալու համար հատկացումները սահմանել հետևյալ չափերով.

հացահատիկի դժուր— 10 տոկոս՝ հաշված փաստուրեն կալսված հացահատիկի քանակից, չհաշված սերմնանոցներից ստացված հացահատիկը, այլ տոկոսն առաջալոր, լավ աշխատող կոլտնտեսութիւնների համար բարձրացնելով մինչև 15%—ի.

արևածաղիկի դժուր— 5 տոկոս, բրնձի դժուր— 10 տոկոս՝ հաշվելով մթերակայաններին հանձնված արևածաղիկի ու բրնձի քանակութիւնից:

5) Յելնելով այն բանից, վոր պետութիւնը հացահատիկ հանձնելու պարտավորութիւնների կատարումը յուրաքանչյուր կոլտնտեսութիւն ու յուրաքանչյուր անհատական տնտեսութիւն առաջահերթ պարտականութիւնն է հանդիսանում և պետք է կատարվի առաջին կալերից, արգելել կոլտնտեսութիւններում, բացի սերմացվի համար նախատեսված հողամասերից սերմֆոնդ կազմելուց, վորևն այլ ֆոնդեր կազմելը, մինչև վոր լրիվ կատարվեն պետութիւնը մթերման դժուր,

վարկը վերադարձնելու դժով և մեքենա-տրակտորային կայանի աշխատանքների զիմաց նրան հասանելիք բնավարձի դժով հացահատիկ, արևածաղիկ ու բրինձ հանձնելու պարտավորութունները:

Մեկնորյա հսկողութուն սահմանել, վորպեսզի կուտընտեսութուններն ու անհատական տնտեսութունները միջերման դժով հացահատիկ հանձնեն իրենց տրված պարտավորութուններին ճիշտ համապատասխան, այսինքն— ցորենը, հաճարը, լոբազգիները և յեզիպտացորենը՝ այդ կուտուրաներից յուրաքանչյուրի համար առանձին սահմանված պարտավորութուններին համապատասխան, իսկ այլ հացահատիկային կուտուրաների վերաբերյալ այն չտիրով, վոր սահմանված է այդ բոլոր կուտուրաների համար տրված պարտավորութուններով, թույլ տալով, վոր կուտընտեսութունը հանձնի ցանկացած կուտուրան՝ իր ընտրությամբ:

6) Դադարեցնել հացահատիկի ու արևածաղիկի կուտընտեսային ու անհատական-գյուղացիական առևտուրը, ինչպես նաև հացահատիկի ու արևածաղիկի գնումն սպառողներացի կողմից՝ Տաջիկստանում, Ուզբեկստանում, Թուրքմենիստանում, Ղազախստանի Հարավային մարզում, Ուեսսայի ու Դենեպրոպետրովսկի մարզերում, Ղրիմում և Անդրկովկասում՝ 1936 թվականի հունիսի 20-ից, իսկ մյուս բոլոր մարզերում, յերկիրներում ու հանրապետութուններում (բացառությամբ Հեռավոր-Արևելյան յերկրի և Արևելյան Սիբիրի յերկրի արևելյան մասի) հունիսի 10-ից:

Հաստատել, վոր հացահատիկի, արևածաղիկի ու բրինձի կուտնտեսային և անհատական-գյուղացիական

առևտուրը կթույլատրվի այն բանից հետո միայն, յերբ յերկիրը, մարզը և հանրապետութունը՝ ամբողջությամբ վերցված, կատարած կլինեն հացահատիկի, արևածաղիկի ու բրնձի հանձնման, վարկը վերադարձնելու և մեքենա-տրակտորային կայաններին հասանելիք բնավարձը հանձնելու սահմանված պլանը, ինչպես նաև՝ յերբ կուտնտեսութունները լրիվ առանձնացրած կլինեն սերմացվի ու կերի նվազազույն ֆոնդերը:

Բ) Բ Ա Մ Բ Ա Կ

7) Առաջարկել բամբակացան շրջանների կուսակցական և խորհրդային կազմակերպութուններին.

ա) ապահովել պետությանը բամբակ հանձնելու վերաբերյալ կնքված կոնտրակտացիոն պայմանագրերի լրիվ կատարումը յուրաքանչյուր առանձին կուտնտեսության ու անհատական տնտեսության կողմից.

բ) հատուկ հսկողութուն սահմանել, վորպեսզի կոնտրակտացիոն պայմանագրերով բամբակ հանձնողներին հասանելիք յուղը, ջուսպը և բամբակ— լինտերը բաց թողնվի այն չտիրով, այն ժամկետներին ու այն գներով, վոր լրովին համապատասխանում է կոնտրակտացիոն պայմանագրերին:

8) Առաջարկել ԽՍՀՄ-ի Թեթև Արդյունաբերության Ժողկոմատին՝ ստուգել և կատարյալ պատրաստի վիճակի հասցնել բամբակամթերման սպարատը, վճռականորեն արմատախիլ անել անցյալ տարի տեղի ունեցած այն փաստերը, յերբ միջերման կայանները, խալտելով որենքը, բամբակն ընդունում էին պահպանման ստացագրերով, ընդունում էին բարձր խոնավու-

Թյուն ունեցող բամբակ, դրանով խակ վնաս հասցնելով պետությանը:

9) Նախազգուշացնել բամբակազտիչ տրեստների ու գործարանների դիրեկտորներին և մթերման կայաններին վարիչներին, վոր նրանց պարտականությունն է՝

ա) բամբակի ընդունումն ու պահպանումը կազմակերպել այնպես, վոր վոչ մի կերպ չվատանա բամբակի վորակը, տեղի չտանենա կորուստ և չիջանա գործարաններում ու մթերման կետերում, վորի համար կազմակերպել ընդունված բամբակի դրության ամենորյա խնամքով ստուգում:

բ) բամբակի ընդունում կատարել վորակի համար կոնտրակտացիոն պայմանադրերում սահմանված կոնցիցիաներին խստորեն համապատասխան:

10) ա) Պարտավորեցնել ԽՍՀՄ-ի Թեթև Արդյունաբերության Ժողկոմատին՝ բոլոր բամբակազտիչ գործարաններում սարքավորել գտիչներ, վորպեսզի մթերման ժամանակ կնդուղներով ստացված ամբողջ բամբակը լիովին գտվի առանց կորուստների:

բ) 1936—37 տարվա ընթացքում չորանոցներով լրիվ ապահովել բոլոր բամբակազտիչ գործարանները:

9) ԿՈՒՇ, ԿԱՆՓ, ԿԵՆԱՅ ՅԵՎ ՃՈՊԱՆԱՅՈՒ

11) Յուրաքանչյուր կոլտնտեսության, կոլտնտեսականի ու մենատնտեսի առաջնահերթ պարտականությունն է լրիվ կատարել պետությանը վուչ, կանեփ և սերմ հանձնելու որենքի ու ժ ունեցող կոնտրակտացիոն պայմանադրերը՝ կոնտրակտացիոն պայմանադրում սահմանված չափերով ու ժամկետներում:

Տեղական կուսակցական և խորհրդային կազմակերպությունների հատուկ ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, վոր անհրաժեշտ է ապահովել վուչի և կանեփի սերմի հանձնումը կոնտրակտացիայի համաձայն և վարկերի վերադարձնելը կալից ամիջապես հետո, ձգտելով վոչ միայն կատարել, այլև դերակատարել վուչի և կանեփի սերմերի մթերման համար սահմանված պլանը:

12) Առաջարկել ԽՍՀՄ-ի Թեթև Արդյունաբերության Ժողկոմատին՝

ա) ապահովել անցյալ տարիների բերքի կենաֆի, հարավային կանեփի և ճուպանացվի ցողունների բոլոր մնացորդների վերամշակումն ամենաուշը մինչև 1936 թ. հոկտեմբերի մեկը:

բ) կենաֆը, հարավային կանեփը և ճուպանացուն նախնական մշակման յենթարկող գործարանների աշխատանքը կազմակերպել այնպես, վոր այդ մշակույթների ամբողջ բերքը լրիվ վերամշակվի մինչև առաջիկա տարվա մթերումներն սկսվելը, ձգտելով ալեկացնել յերկար թելի ստացումը, ինչպես և ավելացնել թելի արտադրումը:

գ) Թուլլ չտալ, վոր կրկնվեն այն դեպքերը, յերբ գործարանները հրաժարվում են ընդունել կոլտնտեսությունների մատակարարած կենաֆի, հարավային կանեփի ու ճուպանացվի ցողունները և ապահովել կոլտնտեսությունների բերած ամբողջ հումքի ընդունումը գործարանների կողմից:

13. Սահմանել, վոր ծխախոտի ու մախորկայի կոնտրակտացիոն պայմանագիրը կոլտնտեսության և մենատնտեսների կողմից կատարված և համարվում միմիայն պայմանագրով սահմանված քանակությամբ ու ասորտիմենտով հանձնված լինելու դեպքում, իսկ կոնտրակտացիոն պայմանագիրը գերակատարելու համար պարգև-հավելում և տրվում այն դեպքում, յեթը ծխախոտ և մախորկա յե հանձնվել կոնտրակտացիոն պայմանագրում մատնանչված արժեքից ավելի գումարով:

14. Սահմանել միջերումների հետևյալ վերջնական ժամկետները՝

ա) դեղին ծխախոտների համար՝ Վրաստանի ՍՍՀ-ում Ադով-Սևծովյան յերկրում՝ 1937 թվի մարտի 15-ը, իսկ ԽՍՀՄ-ի մյուս բոլոր շրջաններում՝ փետրվարի 15-ը.

բ) մախորկայի համար Արևմտյան Սիբիրի, Արևելյան Սիբիրի և Կրասնոյարսկի յերկիրներում և Ոմսկի մարզում՝ դեկտեմբերի 31-ը. մյուս բոլոր մարզերում, յերկիրներում ու հանրապետություններում՝ 1936 թ. դեկտեմբերի մեկը:

15. Առաջարկել ԽՍՀՄ-ի Մինգարդյունարերության ժողկոմատին՝ միջոցներ ձեռք առնել, վոր միջերման կետերում ընդունվող մախորկայի հումքի խոնավությունը վորոչի բացառապես լաբորատորային յեղանակով:

Ե) ԿՐՏՈՑԻԼ ՅԵՎ ՊՏՈՒՂ-ԲԱՆՋԱՐԵՂԵՆ

16. Նկատի առնելով, վոր պետությանը կարտոֆիլ մատակարարելու պարտավորությունները յուրաքան-

չյուր առանձին կոլտնտեսություն, կոլտնտեսական և մենատնտես պետք և լրիվ կատարեն մինչև ցրտերը վրա հասնելը, առաջարկել շրջանային գործադիր կոմիտեներին՝ ըստ յուրաքանչյուր կոլտնտեսության հաստատել այն պլանը, վորով հանվելու յե կարտոֆիլը և վոխադրվելու յե միջերման կայանները, սպիրտի և ուլայի ու շաքաղի գործարանները, կարտոֆիլի մատայարան համան սկիզբը սահմանելով վոչ ուշ քան մինչև սեպտեմբերի 20—25-ը:

17. Մինչև կոլտնտեսությունների, կոլտնտեսականների ու անհատական տնտեսությունների կողմից պետությանը կարտոֆիլ հանձնելու պարտավորությունները կատարելը, արգելել կարտոֆիլի կոլտնտեսային և անհատական գյուղացիական առևտուրը, սահմանելով, վոր յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության ու կոլտնտեսականի կողմից պետությանը կարտոֆիլ հանձնելու պարտավորությունները կատարելուց հետո յե նրանց թույլատրվում կարտոֆիլ վաճառել պետական ու կոոպերատիվ կազմակերպություններին, իսկ կոլտնտեսային ու անհատական գյուղացիական առևտուրը թույլատրվում և ամբողջ յերկրի, մարզի ու հանրապետության կողմից կարտոֆիլ հանձնելու պլանը կատարելուց հետո:

18. Նախազգուշացնել Սոյուզգոսպլոդովոչչ-ի և Ֆենտրոսըլոդովոչչ-ի ղեկավարներին և միջերման կայաններին վարիչներին, վոր նրանք անձամբ պատասխանատու յեն միջերման ամբողջ ուտելու կարտոֆիլի, մանավանդ ձմեռը պահպանելու համար ամբարված կարտոֆիլի անվթար պահպանումն ապահովելու համար:

19. Նշելով կարտոֆիլի ու պտուղների մթերման, պահպանման և առևտրի չափազանց բարձր ծախսերը, հանձնարարել ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհին՝ միջոցներ ձեռք առնել առավելագույն չափով կրճատելու այդ ծախսերն արդյունաբերական կենտրոններում:

20. Պլենումն անթույլատրելի յե համարում, վոր խորհանտեսությունների ու կոլտնտեսությունների բանջարեղենի առատացած արտադրանքը լրիվ չի ուղտադործվում խորհրդային առևտրում՝ բանջարեղենի վորահն ու տեսակները արմատապես բարելավելու համար, և առաջարկում Ե մթերող ու առևտրական կազմակերպություններին և կոնսերվի արդյունաբերությանը—

ա) ապահովել բանջարեղենի առանձին մշակույթների, մանափանդ պոմիդորի, վարունդի, սոխի ու դապարի մթերման պլանի լրիվ կատարումը.

բ) կոնտրակտացիոն պայմանագրերով ընդունել բացառաբևս լավորակ բանջարեղեն, մրդեղեն և թփապտուղներ.

դ) հողատար վերահսկողություն ապահովել բանջարեղենի, մրդեղենի և թփապտուղների վրա փաթաթելիս, փոխադրելիս ու պահելիս, և վերացնել պտղեղենի ու բանջարեղենի փչացումն ու խոտանը:

21. Կենտկոմի պլենումը մթերողներին և կոնսերվի արդյունաբերությանը պարտավորեցնում Ե 1936 թվականին բանջարեղենի, մրդեղենի ու թփապտուղների մթերումները կազմակերպել այնպես, վոր արդարենակության համար առատությամբ ապահովվի լավորակ մրդեղեն ու բանջարեղեն:

22. Առաջարկել Մթերման Կոմիտեյին՝ յերեքնուկի մթերումը կազմակերպել այնպես, վոր լիովին ապահովվի, յերեքնուկի մթերման այն պլանը, վոր հաստատված Ե ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. մարտի 31-ի վորոշմամբ՝ 107.000 ցենտներ:

Կազմակերպել մթերման դծով ընդունված յերեքնուկի սերմերի դտումն ու պահպանումն առանց փչացնելու:

Ե) ՍԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԿԱՐՁԸ

23. Առաջարկել կուսակցական և խորհրդային կազմակերպություններին ու մեքենա-տրակտորային կայաններին դիրեկտորներին՝ ապահովել.

ա) մինչև հունիսի մեկը մեքենա-տրակտորային կայանների կատարած աշխատանքի լիակատար ու ճշգրիտ հաշվառումը, ըստ յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության, մեքենա-տրակտորային կայաններում և կոլտնտեսություններում գտնվող ակտերով հունիս ամսը վա ընթացքում ստուգելով աշխատանքների հաշվառումը.

բ) հացահատիկային և ձիթատու մշակույթների բերքահատվաքի ու կալի, կարտոֆիլ հանելու, վուչ ու կանեփ ջաղելու ժամանակաշրջանում, կոլտնտեսությունների բրիգադիներին և նախադահաների հետ միասին յուրաքանչյուր հինգ օրում բերքահատվաքի, կալսելու և ջաղելու ասպարեղում կատարված աշխատանքների մասին ակտեր կազմելը.

դ) միջոցներ ձեռք առնել, վոր մեքենա-տրակտորա-
յին կայանի կատարած աշխատանքի մասին կորսնտե-
սությանը հաշիվներ դուրս դրվեն ու հանձնվեն, կոլ-
տրնտեսությունն ըստ բերքատվության այս կամ այն
խումբը դասելուց ամենաուշը հինգ ու հետո, իսկ
հացահատիկային ու ձիթատու մշակույթները կալի,
կոմբայններով կատարված բերքահավաքի, կարտոֆիլ
հանելու, վուշ ու կանեփ քաղելու ասպարեզում կա-
տարված աշխատանքի հաշիվները հանձնվեն այդ աշ-
խատանքներն սկսվելուց հինգ ուր մի անգամ:

զ) միջոցներ ձեռք առնել, վոր մեքենա-տրակտորա-
յին կայանները սպասարկած կոլտնտեսություններում
մեքենա-տրակտորային կայանների կշռոշները կրկին
կշռեն այն ամբողջ հացահատիկը, վոր ստացվում է
կայսելուց և կոմբայնով հավաքելուց:

24. Մեքենա-տրակտորային կայանների աշխատանքի
հաշվատուժը բարելավելու և մեքենա-տրակտորային
կայանների ու կոլտնտեսությունների միջև ճիշտ հաշ-
վարկումներն ապահովելու նպատակով յուրաքանչյուր
մեքենա-տրակտորային կայանում հաստատել դիրեկ-
տորի հատուկ տեղակալի պաշտոն՝ կոլտնտեսություն-
ների հետ հաշիվ տեսնելու դժով:

25. Առաջարկել բերքատվության պետական միջ-
ջրջանային հանձնաժողովներին, ղեկավարվելով կոլ-
տրնտեսություններն ըստ բերքատվության այս կամ
այն խումբը դասելու համար 1935 թվականին սահ-
մանված կարգով, կոլտնտեսություններն ըստ բեր-
քատվության խմբերի բաժանումն ավարտել՝
ըստ հասկային մշակույթների՝ Ուղբեկստանի,
Թուրքմենստանի, Տաջիկստանի, Ադրբեջանի, Հայաս-

տանի ու Վրաստանի, Ղրիմի հանրապետություննե-
րում՝ մինչև հունիսի 20-ը, հարավային մյուս շրջան-
ներում՝ մինչև ուստոսի 10-ը, մյուս բոլոր մարզե-
րում, յերկիրներում ու հանրապետություններում
միջև սեպտեմբերի 5-ը:

26. Անբավարար համարելով մեքենա-տրակտորային
կայանների կողմից կոլտնտեսություններին սպասար-
կելը կարտոֆիլ հանելու, վուշ, կանեփ և ձիթատու
մշակույթներ քաղելու ասպարեզում— առաջարկել
ԽՍՀՄ-ի Հողժողկոմատին և մեքենա-տրակտորա-
յին կայանների դիրեկտորներին հացահատիկային
կոլտուրաների հետ համահավասար ապահովել այդ
կոլտուրաների մշակման ու բերքահավաքի աշխա-
տանքների սլանները կատարումը, ոչտանդործելով
մեքենա-տրակտորային կայանների մեքենաներն՝ ող-
նելու կորսնտեսություններին վուշի ավելի լավ քաղու-
մը և սկզբնական վերամշակումը կազմակերպելու գոր-
ծում, մասնավորապես Սերգեյեվի բոլոր վուշաքաղ
մեքենաները կենտրոնացնել մեքենա-տրակտորային
կայաններում՝ կոլտնտեսություններին սպասարկելու
համար:

Ը) ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՊԱՀՊԱՆՈՒՄ ՈՒ ՓՈՒՄԳՐՈՒՄ

27. Առաջարկել ԽՍՀՄ-ի Մթերման կոմիտեյին, Թե-
թե Արդյունաբերության Ժողկոմատին, Մնդարդյու-
նաբերության Ժողկոմատին, Ներքին Առևտրի Ժող-
կոմատին և Հողժողկոմատին—

ա) մինչև մթերումներն սկսվելը լավորակ նորոգման
յենթարկել պահեստարանները, ախտահանել դրանք,

մթերման կայաններին մատակարարել անհրաժեշտ
ինվենտար, վորպեսզի ապահովվի մթերվելիք բոլոր
գյուղատնտեսական մթերքների անխափան ընդունումը
ու նրանց պահպանումն առանց կորուստի .

բ) ավարտել 1936 թվականի պլանով կառուցվելիք
նոր պահեստարանների շինարարութունը հետևյալ
ժամկետներին՝

հացահատիկների համար, առնվազն 55 միլիոն փութ
տարողությամբ, մինչև հուլիսի 1-ը, 35 միլիոն փութ
տարողությամբ՝ մինչև օգոստոսի 1-ը և մնացած ամ-
բողջ տարողությունը մինչև սեպտեմբերի 1-ը .

պտուղների ու բանջարեղենի համար՝ մինչև օգոս-
տոսի մեկը .

բամբակի համար՝ 14 միլիոն փութ պահեստային
տարողություն և 2000 հակային հրապարակ՝ մինչև
սեպտեմբերի 15-ը .

վուչի ու ծխախոտի համար՝ մինչև հոկտեմբերի
մեկը .

գ) մինչև սեպտեմբերի մեկն ավարտել 15 նոր ելե-
վատորների կառուցումը և 80 ելեվատորների ընդար-
ձակումը .

դ) ավարտել չորանոցների կառուցումը՝
հացահատիկների համար 75 չորանոց մինչև օգոս-
տոսի 1-ը, 150 չորանոց մինչև սեպտեմբերի 1-ը, 50
չորանոց մինչև հոկտեմբերի 1-ը, մնացած չորանոց-
ները մինչև դեկտեմբերի 1-ը :

Բամբակի համար 8 գործարանային չորանոց մին-
չև հոկտեմբերի 15-ը :

ե) կոլտնտեսութուններում ավարտել ծխախոտ չո-
րացնելու շենքերը մինչև սեպտեմբերի մեկը :

28. Միանգամայն անբավարար համարել այն առա-
ջին հաջողությունները, վոր ձեռք են բերել մթերման
կայանները հացահատիկի կորստի դեմ մղվող պայքա-
րում : Մթերման շատ կայաններում դեռ հացահատիկի
մեծ կորուստներ են լինում և մթերման կայաններում
պահվող հացահատիկը վարակվում է ցորենի վոջիով :
Այդ բոլորը մթերման կայանների աշխատողներից
պահանջում է ամենուրյա համառ աշխատանք կատարել
կորուստները վերացնելու և հացահատիկը վնասատու-
ներից մաքրելու ուղղությամբ :

29. Բերքահավաքի ժամանակաշրջանում մեքենա-
տրակտորային կայանների ու խորհանտեսությունների
չօֆերների համար մտցնել աշխատանքի պրոդեքսիվ-
գործավարձային վարձատրություն, ըստ փոխադրված
բեռի քանակի և հեռավորության : Պարտավորեցնել
ԽՍՀՄ-ի Հողօժողկոմատին, Խորհանոթողկոմատին,
ԽՍՀՄ-ի Մանրարդյունաբերության Ժողկոմատին՝
հինգ որում արտադրական նորմաներ ու գործավարձա-
յին զնահատումներ սահմանել ավտոմեքենաներով բեռ-
ներ փոխադրելու համար : Սահմանել, վոր շօֆերը
նորմայից դուրս իր փոխադրած յուրաքանչյուր տոնն
բեռի համար, ավտոմեքենան լավ վիճակում պահպա-
նելու դեպքում, 25 տոկոս պարգև հավելում է
ստանում սահմանված զնահատումներից, և փոխա-
դրման պլանները կատարելիս 25 տոկոս պարգև՝ վա-
ռելանյութի ու ռետինի անտեսումից : Բերքահավաքի
աշխատանքի ժամանակ ավտոպարկի պարապուրդի
համար շօֆերներին վարձատրություն չտալ :

30. Հացահատիկի պետական պաշարի տարեց-տարի
աճելը և յերկրում հացահատիկի բերքը 7-8 միլիարդ

վիթի հասցեելու խնդրի իրազորման կապակցութեամբ նրա հետագա ամենայն պահանջում և տեխնիկական վերակառուցման յենթարկել պահանջատային տնտեսութեանը՝ հացահատիկի պաշարի յերկարատև ու անվերջար պահպանումն ապահովելու համար:

* * *

Համկ(բ)ի կենտրոնի պլենումը բոլոր խորհրդային և կուսակցական կազմակերպութեաններին հիշեցնում է, վոր ուշ դարնան դժվարութեաններին հաջող հաղթահարումը միայն առաջին քայլն է 1936 թվականի բարձր բերքի համար մղվող պայքարում, կոլտնտեսականների ունեորութեան հետագա բարձրացման, գյուղատնտեսութեան նոր վերելքի համար մղվող պայքարում:

Պլենումը խորհրդային և կուսակցական կազմակերպութեաններին նախազուշացնում է, վոր անհրաժեշտ է վճռաբար հաղթահարել ինքնահանդատացման տրամադրութեանները, ձեռք բերված հաջողութեաններով սարվելը և ուշադրութեան բթացումը ջախջախված դասակարգային թշնամու մնացորդների քայքայելչ գործունեյութեան նկատմամբ:

Թե հացահատիկային և թե տեխնիկական մշակույթների բարձր բերքի համար, հոգատար քաղհանի ու մշակման համար, դաշտերը մոլախոտերից ու գյուղատնտեսական վնասատուներից մաքրելու համար պայքարելը, կոմբայնների որինակելի աշխատանքը և բերքը ժամանակին հավաքելը, պետութեան հանդեպ գյուղատնտեսական մթերքներ հանձնելու պարտավորութեանները լրիվ ու սահմանված ժամկետին կատարելը,

պետք է կուսակցական ու խորհրդային բոլոր կազմակերպութեաններին ուշադրութեան կենտրոնը հանդիսանան և ապահովեն գյուղատնտեսութեան մթերքների առատութեանն ու կոլտնտեսականների ունեորութեաննոր վերելքը 1936 թվականին:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԽՍՀՄ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Համ Կ(բ)Կ Կենտկոմի պլենումի բանաձևվն ընկ. ՍՏԱԼԻՆԻ գե-
կուցման առթիվ, ընդունված 1936 թվականի հունիսի 1-ին . . . 5

ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համ Կ(բ)Կ կենտկոմի պլենումի բանաձևվն ընկերներ ՉԵՐՆՈՎԻ,
ԿԱԼՄՍՆՈՎԻՉԻ, ՄԻԿՈՅԱՆԻ յեվ ԿԼԵՑՆԵՐԻ գեկուցումների առ-
թիվ, ընդունված 1936 թվականի հունիսի 4-ին

I. Ցանքերը խնամելու և բերքահավաքի մասին

Ա) Հացահատիկային կուլտուրաներ և արևածաղիկ	15
Բ) Բամբակ	16
Գ) Ճակնդեղ	19
Դ) Վուշ և կանեփ	22
Ե) Յերեքնուկ և առվույտ	24
Զ) Կարտֆիլ	24
Է) Խոտհունձ և կերի սխրոսացում	24

II. Գյուղատնտեսական մթերքների մթերման մասին

Ա) Հացահատիկ, արևածաղիկ և բրինձ	25
Բ) Բամբակ	29
Գ) Վուշ, կանեփ, կենսաֆ և ճուղանացու	30
Դ) Ծխախոտ և մալսորկա	32
Ե) Կարտֆիլ և պտուղ-բանջարեղեն	32
Զ) Յերեքնուկ	35
Է) Մեքենա-արտկտորային կայանների աշխատանքի բնա- վարձը	35
Ը) Ընդունում, պահպանում ու փոխադրում	37

Խմբագիր Ս. Կիրակոսյան
Թարգ. Հ. Թուրքյան
Մրբագրիչ Վ. Ջիդեյան.
Տեխն. խմբագիր Վ. Մանուկյան


Գլավիտի լիազոր C—1075, հրատ № 379.
պատվեր № 221, տիրած 4.000, ինդեքս $\frac{\text{П-84}}{\text{НП}}$

Հանձնված է արտադրության 16 հունիսի 1936 թ.
Ստորագրված է տպագրության 4 հուլիսի 1936 թ.

Գինը 40 կոպ.

Հայկուստրեսի տպարան, Ալլահվերդյան № 27, Յեքիզաբ





ԳԻՆԸ 40 Կ.

514



РЕЗОЛЮЦИИ ИЮНЬСКОГО ПЛЕНУМА
ЦЕНТРАЛЬНОГО КОМИТЕТА ВКП(б)

Армпартиздат, Эривань

0
« Ազգային գրադարան



NL0184511

